338.98
ん-11

338.98
Հ-11
2802-

Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

# ԿԱՏԱՐԵՆՔ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ

(Երեվանի գործարանների հնգամյակը յեվ յեզրափակման տարվա պլանները Հոկտեմբերյան հեղափոխության XV տարեդարձին կատարելու առթիվ)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1932

# ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԿՈՄԲՋԻՋՆԵՐԻՆ

Այս բրոշյուրի մեջ ամփոփված է Յերկոմի բյուրոյի հուլիսի 28–ի վորոշումը և միքանի նյութեր՝ ճեղքվածքների վերացման յեռամսյակը հաջող անցկացնելու համար:

Հ.Կ.(բ)Կ. Յերքաղկոմը առաջարկում է՝ պրոֆ. և ԼԿՅԵՄ կազմակերպությունների հետ, բոլոր ողակներում քննել և կոնկրետ միջոցառումներ մշակել կուսակցության բոլոր շարժաբեր փոկերի գծով ապահովելու յեզրափակման տարվա արդֆինպլանների կատարումը Հոկտեմբերյան հեղափոխության 15–րդ տարեդարձին:

Հ.Կ.(բ)Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

34330

ՀՍՍՀ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՊԵՏՔ Է ՄԻՇՏ ՀԻՇԵԼ ՅԵՎ ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՐԱԳԻՐ ԴԱՐՁՆԵԼ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԲԱՆԱԼԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍՌԱՋՆՈՐԴԻ 6 ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

1. «Այդպես ուրեմն, կազմակերպված ձևով հավաքել բանվորական ուժը կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրերի միջոցով, մեքենայացնել աշխատանքը—այս է խնդիրը»:

2. «Ուրեմն, վերացնել բանվորական ուժի հոսունությունը, վոչնչացնել հավասարեցումը, ճիշտ կազմակերպել աշխատավարձը, բարելավել բանվորների կենցաղային պայմանները—այս է խնդիրը»:

3. «Այսպես ուրեմն, վերացնել դիմազրկությունը, բարելավել աշխատանքի կազմակերպումը, ճիշտ դասավորել ուժերը ձեռնարկության մեջ—այս է խնդիրը»:

4. «Այսպես ուրեմն, ջանալ, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան— այս է խնդիրը»:

5. «Ուրեմն, փոխել վերաբերմունքը դեպի հին դպրոցի ինժեներա-տեխնիկական ուժերը, ցույց տալ նրանց հանդեպ ավելի ուշադրություն և հոգատարություն, ավելի համարձակ ներգրավել նրանց աշխատանքի— այս է խնդիրը»:

6. «Այդպես ուրեմն, արմատացնել տնտեսական հաշվարկը, բարձրացնել արդյունաբերության ներքին միջոցների կուտակումը— այս է խնդիրը»:

---



# ԿԱՏԱՐԵՆՔ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ

1931 թ.՝ հնգամյակի 3-րդ վճռական տարում, Յերևանի գործարանների բանվորները և ինժեներա-տեխնիկական պերսոնալը, կուսակցության լենինյան ղեկավարությամբ, պրոլետարական վողջ հասարակայնության օգնությամբ, ջախջախելով օպորտունիստական բոլոր արգելակները, ընդհանուր առմամբ կարողացան կատարել իրենց արդֆինպլանները 100,8%-ով:

Հ.Կ.(բ)Կ. Յերևանի քաղաքային կազմակերպության 2-րդ կոնֆերանսը՝ հիմնվելով Յերևանի բանվորության քանիցս արտահայտած պահանջների վրա, խոստում տվեց Հայկոմկուսի 8-րդ համագումարին և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինին՝ Յերևանի արդյունաբերության հնգամյակը և յեզրափակման տարվա արդֆինպլանները կատարելու Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին:

Այդ խոստումը պատասխանատու պարտավորություն է: Նա արտահայտում է Յերևանի պրոլետարների ստեղծագործական բարձր ենտուզիազմը և պլանները կատարելու կարողությունն ու վճռականությունը:

Ձեթ-օճառի, կարբիդի, կոնսերվի, ծխախոտի, կաշվի և մյուս գործարանների հարվածայինները Հայկոմկուսի 8-րդ համագումարին և Յերքաղկազմակերպության 2-րդ կոնֆերանսին ներկայացրած իրենց ռապորտի մեջ գրել են.

«Մենք խոստանում ենք խորացնել մեր ձեռք բերած նվաճումները և մեր գործարանների հնգամյակն ու յեզրափակման տարվա արդֆինպլանները կատարել Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին:

«Բոլշևիկի խոսքը լուրջ խոսք է»: (Ստալին):

Յերևանի բանվորության ստանձնած այս պարտավորությունը հրամայողական խնդիր է առաջադրում ընկ. Ստալինի 6 ցուցումները ամենօրյա աշխատանքի ծրագիր դարձնելով, արդֆինպլանների քանակական և վորակական ցուցանիշների կատարման ավելի բարձր տեմպ վերցնել, վերակառուցել կուսակցության բոլոր օղակները և նրա շարժաբեր փոկերի վողջ գործունեյությունը, «նոր պայմաններում նոր ձևով աշխատելու» համար:

1932 թվին, յեզրափակման տարում, Յերևանի արդյունաբերության արտադրանքը, 1931 թվի համեմատությամբ, ավելացել է միջին հաշվով մեկ ու կես անգամ, բանվորության թիվն ավելացել է մոտ 1500 հոգով, իսկ աշխատավարձը բարձրացել է միջին հաշվով 9,3%-ով:

Առաջին կիսամյակում զգալի նվաճումներ կան բանվորության նյութական-կենցաղային դրության բարելավման, բանմատակարարման, կուսակցական-մասսայական աշխատանքի ծավալման և այլ բնագավառներում:

Սակայն գերատեսչությունների և մի քանի արտադրական ձեռնարկների, վարչական, կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների միանգամայն անբավարար աշխատանքը լուրջ վտանգի տակ է դնում պլանների կատարման ուղղությամբ մեր վերցրած խոստման կենսագործումը:

Ռեա՞լ են արդյոք 1932 թվի Յերևանի գործարանների արդֆինպլանները: Անպայման այո: Այդ է ապացուցում թեկուզ և հետ մնացող գործարանների առանձին ցեխերի պլանների գերակատարումը:

Մենք ունենք Յերևանի գործարանների արդֆինպլանների խոստացած ժամանակին կատարելու բոլոր նախապայմանները. այսօր Յերևանի համարյա բոլոր գործարանները և արտադրական ձեռնարկներն ապահովված են բանուժով, հումքով և օժանդակ նյութերով:

Պլանների թերակատարման վոչ մի օբյեկտիվ պատճառ չկա, պլանների թերակատարումը կախված է գերազանցապես գործարանների ղեկավարության անկարողությունից, անճարակությունից և ընկ. Ստալինի ցուցումների կատարումն անտեսելուց:



«Մեր արտադրական պլանի իրական լինելը նոր կյանք ստեղծող միլիոնավոր աշխատավորներն են: Մեր ծրագրի իրական լինելը—դա կենդանի մարդիկ են, մենք ենք ձեզ հետ, մեր կամքը դեպի աշխատանքը, նոր ձևով աշխատելու մեր պատրաստակամությունը, պլանը կատարելու մեր վճռականությունը: Ունե՞նք արդյոք մենք այդ վճռականությունը: Այո, ունենք: Հետևապես մեր արտադրական ծրագիրը կարող է և պետք է իրագործվի», ասում է ընկ. Ստալինը:

Արդեն թևակոխել ենք յեզրափակման տարվա 2-րդ կիսամյակը: Այս կիսամյակը հանդիսանում է, առանձնապես հետ մնացող գործարանների համար, ուժերի և բոլոր հնարավորությունների մոբիլիզացիայի վճռական կիսամյակ: Այս կիսամյակում է լուծվում 5-ամյակը 4 տարում իրագործելու պատմական խոշոր նշանակություն ունեցող խնդիրը:

Հ.Կ.(բ)Կ. Յերքաղկոմը և ՀԱՄԽ-ը՝ ընդառաջելով մի շարք գործարանների պահանջներին, 2-րդ կիսամյակի 1-ին յեռամսյակը հայտարարել են ճեղքվածքների վերացման յեռամսյակ:

Ճեղքվածքների վերացման յեռամսյակի խնդիրն է՝ վերացնել անցյալ կիսամյակում գործարանների, արտադրական ձեռնարկների և շինարարության պլանների մեջ առաջացած թերակատարումները և մեր խոստման համաձայն ապահովել պլանները Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին կատարելու խնդիրը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է վճռական և կազմակերպված հակահարված տալ բոլոր այն տենդենցներին ու տրամադրություններին, վորոնք կփորձեն ռեալ չհամարել և կասկածի տակ վերցնել Յերևանի պրոլետարների խոստման իրական լինելը:

Այդ նպատակով պետք է վոտքի կանգնեցնել Յերևանի պրոլետարական վողջ հասարակայնությունը, կազմակերպել

և գլխավորել բանվորության ստեղծագործական ենտուզիազմը և վճռական շրջադարձ կատարել բոլոր կազմակերպությունների գծով, քանակական-վորակական բարձր ցուցանիշների հասնելու համար:

Կուսակցական կազմակերպությունների հիմնական աշխատանքը ընկ. Ստալինի 6 ցուցումների լրիվ իրագործումն ապահովելու հետ մասսաների ստեղծագործ նախաձեռնության գլխավորումն է:

«Այն կուսկազմակերպությունը, վոր սերտորեն կապված է մասսաների հետ, գիտե, թե ինչով է ապրում գործարանային մասսան, կարողանում է այդ կապերի միջոցով չափել, հայտնաբերել տնտեսական ղեկավարության թերությունները, աշխատանքի կազմակերպման բացերը և այլն, վոր գիտե կոնկրետ կերպով, թե վորտեղ և ինչու տապալվում է յերբեմն տնտեսական հիմնական խնդիրների կատարումը, նման կազմակերպությունը միշտ կկարողանա ապահովել ձեռնարկության տնտեսական կյանքի իրական ներգործող կոնկրետ կուսակցական ղեկավարությունը» («Բոլշևիկի» № 5—6-ի առաջնորդողից):

Այսպես պետք է աշխատեն վերևից վար կուսակցական և բոլոր կազմակերպությունների բոլոր օղակները:

[illegible] գործարանի ենտուզիաստները մի կոչով դիմեցին Յերևանի բոլոր արտադրական ձեռնարկներին՝ յեզրափակման տարվա պլանները Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին անպայման կատարելու համար:

Նրանց արձագանքեցին կոնսերվի, վինաշամպանի ֆաբրիկի, 2-րդ Յերգեսի և մյուս գործարանների հարվածային բանվորները:

Անհրաժեշտ է գործարաններում, առանձին ցեխերում, հերթափոխություններում և բրիգադներում ճեղքվածքների վերացման յեռամսյակի խնդիրների կապակցությամբ քննել գործարանների 2-րդ հնգամյակը, ինչպես և առաջավոր գործարանների դիմումները և այդ հիման վրա գլխավորել բանվորների արտադրական ակտիվությունը և կոնկրետ միջոցառումներ նշել՝ իրագործելու 17-րդ կոնֆերենցիայի այն ցուցումը, վոր՝



«1932 թվի հանդիպական պլանի հարվածայնության և ամրապնդման հիմնական լոզունգը յուրաքանչյուր ձեռնարկության համար պետք է լինի հետևյալը—տվյալ նյութական միջոցներով, ավելի մեծ խնայողությամբ, արտադրական հնարավորությունների լավագույն օգտագործման, ուժերի լավագույն մոբիլիզացիայի և լավագույն ղեկավարության հիման վրա յերկրին տալ ավելի շատ արտադրանք և լավագույն վորակ»:

Պատվի և հերոսության գործ դարձնելով աշխատանքը, մենք պետք է վոտքի հանենք Յերևանի վողջ պրոլետարական հասարակայնությունը՝ յեզրափակման տարվա պլանները Հոկտեմբերյան հեղափոխության 5-րդ տարեդարձին կատարելու համար:

———

## ՅԵՐԵՎԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ «ՃԵՂՔՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՅԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ» (ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐ) ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐԸ

*(Հաստատված է Յերկոմի բյուրոյի 1932 թ. հուլիսի 28-ի նիստում)*

### 1. Հ.Կ.(բ)Կ. ՅԵՐԲԱՂԿՈՄԻ ԳԾՈՎ

1. *Օգոստոսի 3-ին հրավիրել կոմբջիջների քարտուղարների, գործարկոմների նախագահների, Յերևանի գործարանների և շինարարական կազմակերպությունների դիրեկտորների ու* ԼԿՅԵՄ *բջիջների քարտուղարների խորհրդակցություն, ուր քննության առնել «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» նշանակությունը և ձեռնարկությունների կազմակերպությունների անելիքները:*

2. *Բոլոր արդյունաբերական և շինարարական օբյեկտներից կցել Յերկոմի անդամներ «ճեղքվածքների վերացման յեռամսյակում» ձեռնարկությունների կազմակերպությունների գործնական ոգնություն ցույց տալու և բջիջների կուսակցական-մասսայական աշխատանքը բարելավելու գործին աջակցելու համար:*

3. *Պարտավորեցնել բոլոր կոմբջիջներին՝ իրենց արտակարգ դռնբաց ժողովներում, ցեխերում և բրիգադներում հատուկ քննության առնել «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» նշանակությունը և սույն ծրագրի հիման վրա մշակել կոնկրետ միջոցառումներ բջիջների, պրոֆ. ԼԿՅԵՄ և անտեսական կազմակերպությունների գծով, «ճեղքվածքների վերացման յեռամսյակում» կատարվելիք աշխատանքի համար:*

4. *Առանձին-առանձին հետազոտել Յերևանի բոլոր գործարանների և շինարարական օբյեկտների կուսակցական բջիջների կուս.-մասսայական աշխատանքի դրվածքը և գործ-*



*նական ոգնություն ցուցաբերել կոմբջիջներին՝ այդ աշխա-*
*տանքը բարձր աստիճանի հասցնելու համար:*
5. *Հետազոտել կուսակցական ղեկավարության դրվածքը*
*Յերևանի բոլոր գործարաններում և շինարարական օբյեկտ-*
*ներում, անտեսական ղեկավարությունը փոխարինելու սար-*
*քերը և միանձնյա ղեկավարության խախտումները յերևան*
*հանելու և ուղղելու տեսակետից, հատուկ ուշադրություն*
*դարձնելով արտադրության ստորին ողակների վրա:*
6. *Յերևանի գործարաններում և շինօբյեկտներում ընկ.*
*Ստալինի 6 ցուցումների կատարման ստուգման տեսակե-*
*տից անհրաժեշտ համարել ստուգել՝*
*ա) Աշխատավարձի և աշխատանքի արտադրողականու-*
*թյան փոխհարաբերությունը—գործարքային աշխատանքի*
*կիրառման, աշխատանքի ու գնահատումների նորմաների վե-*
*րանայման և աշխատավարձի ֆոնդերի գերածախսը վերաց-*
*նելու տեսակետից:*
*բ) Ցեխային և բրիգադային տնտհաշվարկի կիրառումը*
*և նրա արդյունքները:*
*գ) Նյութերի խնայողության, ներքին միջոցների մոբի-*
*լիզացիայի համար, խոտանի և պարապուրդների դեմ տար-*
*վող պայքարը և խոտանի ու պարապուրդների վարձատրու-*
*թյան սիստեմը:*
*դ) Հերթափոխային-հանդիպական և ստորին պլանա-*
*վորման դրվածքը—պլանները 10 ամսում խտացնելու և ցե-*
*խը, դազգյահը հասցնելու տեսակետից:*
*ե) Աշխատավարձի «ձախ» հավասարեցման, բանուժի*
*հոսունության դեմ և բանվորակարգման ու բանվորների*
*սոցկենցաղային դրության բարելավման համար տարվող*
*պայքարը— կուսվորուշումների կատարման ստուգման տե-*
*սակետից:*
*զ) Աշխատանքի կազմակերպման գծով տարվող աշխա-*
*տանքը դիմազրկության վերացման տեսակետից:*
*է) Արտադրության ռացիոնալիզացիայի, գյուտարարու-*

թյան և բանուժի հավաքագրման 1932 թ. 2-րդ կիսամյակի պլանը:

7. Հետազոտել տեխպրոպագանդայի դրվածքը Երևանի ձեռնարկություններում և արմատական միջոցառումներով ուժեղացնել աշխատանքն այդ բնագավառում:

8. Ստուգել աշխատանքի դիսցիպլինայի դրությունը Երևանի գործարաններում և կտրուկ միջոցառումներով ամրապնդել այն:

9. Հետազոտել լայն գործածության ապրանքների արտադրության կազմակերպման դրությունը Երևանի գործարաններում և յերևան հանելով այդ ուղղությամբ յեղած հնարավորությունները՝ ընդարձակել այդ գործը:

10. Հետազոտել պրոֆաշխատանքի վերակառուցման ընթացքը Երևանի ձեռնարկություններում— կուսորոշումների կատարման ստուգման տեսակետից:

11. Հետազոտել ԼԿՅԵՄ աշխատանքի վերակառուցման ընթացքը Երևանի ձեռնարկություններում— կուսորոշումների կատարման ստուգման տեսակետից:

12. Անհրաժեշտ համարել սոցմրցման պայմանագրեր կնքել Երևանի գործարանների և շինոբյեկտների կոմբջիջների և գործարկոմ-բանկոմների միջև «ճեղքվածքների վերացման յեռամսյակը» հաջող անցկացնելու համար:

13. Օգոստոսի 25-ին, և 26-ին ու սեպտեմբերի 25-ին և 26-ին հրավիրել կցված ընկերների և գործարանների ու շինոբյեկտների յեռանկյունների խորհրդակցություններ— յեռամսյակի ընթացքը քննելու և նկատված բացերի ու պլանների կատարման արգելքների վերացման համար միջոցներ ձեռք առնելու նպատակով:

14. Բացի նախատեսված (սույն ծրագրով) խորհրդակցություններից արգելել գերատեսչությունների, ՀԱՄԽ-ի և այլ որգանների գծով հրավիրվող՝ այս հարցին վերաբերող բոլոր տեսակի խորհրդակցություններն ու ժողովները «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» ընթացքում:



## 2. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

1. Օգոստոսի 2-ին բոլոր գործարանների գործարկոմների, բանկոմների և Կ. վարչությունների մասնակցությամբ ՀԱՄԽ-ի նախագահության նիստում լսել հատուկ զեկուցում «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» նշանակության և պրոֆմիությունների անելիքների մասին:

2. Երևանի գործարանների և շինոբյեկտների արտադրական խորհրդակցությունների նիստերում քննության առնել՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրության ռացիոնալացման, բանգյուտարարության ծավալման, հում նյութի և վառելանյութի խնայողության խնդիրները և կոնկրետ միջոցներ ձեռք առնել այդ խնդիրների կատարման համար:

3. Օգոստոս ամսվա ընթացքում վերջնականապես ավարտել արտադրական խորհրդակցությունների աշխատանքի վերակառուցումն ըստ ՀԱՄԿԽ-ի 1931 թ. հոկտեմբերի 11-ի վորոշման— գործարկոմ-տեղկոմներին կից արտադրական խորհրդակցության բյուրոներ, ըստ պրոֆեսիաների, բրիգադների արտխորհրդակցություններ կազմակերպելով:

4. «Ճեղքվածքների վերացման յեռամսյակի» ընթացքում լայն ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը, բրիգադային տնտհաշվարկը և հերթափոխային հանդիպական պլանավորումը: Կազմակերպել սոցմրցում՝ հարվածային բրիգադների և առանձին հարվածայինների միջև «ճեղքվածքների վերացման յեռամսյակում» պլանների կատարման ու գերակատարման կապակցությամբ, ամեն կերպ ապահովելով կատարման արդյունքների ճիշտ հաշվառումն ու մասսայականացումը:

5. Կնքել սոցմրցման պայմանագրեր բոլոր կենտվարչությունների միջև՝ իրենց գծով սպասարկվող գործարաններում «ճեղքվածքների վերացման յեռամսյակում» կատարվող աշխատանքի շուրջը, առանձնելով գործնական պարտավո-

բություններ, վորոնք կապահովեն պլանների լրիվ կատարումը Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին:

6. Կոմայգում ցուցադրել պլանների կատարման տեղեկագրերը:

7. Ակումբներում, կարմիր անկյուններում և կոմունարների այգում «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» կապակցությամբ կազմակերպել դեղարվեստական յելույթներ, առանձին գործարանների պայքարի որինակներից բեմադրություններ ու կազմել որացուցային ծրագիր յեռամսյակի կուլտուրական սպասարկման համար:

8. Բոլոր գործարաններին և շինոբյեկտներին կից կազմակերպել «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» ահազանգող պոստեր:

9. Գործարանների և շինոբյեկտների կողմից Հայաստանի կոմկուսակցության 8-րդ համագումարին, Յերևանի քաղաքային 2-րդ կոնֆերանսին և Հայաստանի արհմիությունների 7-րդ համագումարին ներկայացրած ռապորտների ռեալիզացիայի արդյունքները պարզելու համար օգոստոսի 1-ից—15-ը անցկացնել ստուգատես և արդյունքները մասսայականացնել գործարաններում:

10. «Ճեղքվածքների վերացման յեռամսյակի» ընթացքում պրոֆաշխատանքի վերակառուցումով պլանների կատարման ու գերակատարման համար պայքարող որինակելի գործարկոմ-բանկոմներին պարգևատրել: Այդ նպատակով առանձնացնել հատուկ ֆոնդ:

11. «Ճեղքվածքների վերացման յեռամսյակի» ընթացքում պլանների կատարման համար բոլշևիկորեն պայքարող գործարանին տալ Յերևանի քաղկոմի և ՀԱՄԽ-ի փոխանցիկ դրոշը:

12. ՀԱՄԽ-ին կից ՃՏՄԲ-ի միջոցով հրավիրել Յերևանի ճարտարապետական-տեխնիկական աշխատողների լայն խորհրդակցություն «ճեղքվածքների վերացման յեռամսյակում» ՃՏ աշխատողների անելիքները քննելու և պլանների կատարման համար մղվող պայքարին գործնական, կոնկրետ օգնություն ցույց տալու նպատակով առանձին գործարաններին և շինոբյեկտներին ՃՏ աշխատողներ կցելու համար:



13. Բոլոր կենտվարչություններից օգոստոսի 1-ից մեկական պատասխանատու աշխատող ամրացնել գործարաններին, շինոբյեկտներին— նրանց պատասխանատու դարձնելով «ճեղքվածքների վերացման յեռամսյակում» կատարվող պրոֆաշխատանքի համար:

14. Մշակել կոնկրետ միջոցառումներ գործարաններում և շինարարական օբյեկտներում պրոֆ. սորբին օղակների կողմից ընկ. Ստալինի 6 ցուցումների գործնական կիրառման ուղղությամբ կատարվող աշխատանքի համար:

## 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

1. «Ճեղքվածքների վերացման յեռամսյակի» ընթացքում գործարանների դիրեկցիաներին գործնական օգնություն ցույց տալու համար գործարաններին կցել գերատեսչությունների պատասխանատու աշխատողներ, ինչպես նաև անհրաժեշտ թվով պլանային, հաշվային և ինժեներա-տեխնիկական աշխատողներ:

2. Բոլոր գերատեսչությունների կոլեգիաների նիստերում հատուկ քննության առնել գործարանների և շինոբյեկտների հում և օժանդակ նյութերի կանոնավոր մատակարարման խնդիրը և առանձին պատասխանատու աշխատող առանձնացնել այդ գործը կարգավորելու համար:

3. Անտառմոդկոմատի միջոցով մեկ տասնօրյակի ընթացքում լրացնել փայտամշակման գործարանի ղեկավար կադրերի պակասը:

4. Անտառմոդկոմատի Փարզործոսի 2-րդ կուրսի աշակերտներից 20 հոգի հետ կանչել արձակուրդից և կցել փայտամշակման գործարանին աշխատելու:

5. Փայտամշակման գործարանը բանուժով ապահովելու համար մեկ տասնօրյակի ընթացքում կազմակերպել բանուժի հավաքագրման ապարատ և սկսել հավաքագրումը:

6. Փայտամշակման գործարանի բանվորներին բնակարանով ապահովելու համար մեկ տասնօրյակի ընթացքում դատարկել գործարանի բանվորների համար կառուցված, բայց Հայարդշինի կողմից զբաղեցրած բնակարանները:

7. Բոլոր գերատեսչությունների կոլեգիաների նիստերում հատուկ քննության առնել իրենց յենթակա գործարաններում լայն գործածության ապրանքների արտադրության ներկա վիճակը և գործնական միջոցառումներով ընդարձակել այն:

8. Ընկ. Ստալինի 6 ցուցումների կատարման համար բոլոր գերատեսչությունների գծով կատարել հետևյալը՝

ա) Քննության առնել իրենց յենթակա գործարանների ռացիոնալիզացիայի և մեխանիզացիայի 1932 թ. 2-րդ կիսամյակի պլանը և նրա իրագործման միջոցառումները:

բ) Մշակել կոնկրետ ձեռնարկումներ իրենց յենթակա գործարաններում ստորին պլանավորումը կազմակերպելու, այդ հիման վրա իրական տնտհաշվարկն արմատավորելու և աշխատանքի կազմակերպումը արտադրության բոլոր ողակներում բարելավելու համար: Այդ նպատակով հատուկ ուշադրություն դարձնել գործարանների հաշվային և պլանային ապարատների ուժեղացման վրա, ոգտագործելով նաև պլան-ոպերատիվ խմբակներում աշխատող բանվորական ակտիվին:

գ) Գործնական աջակցություն ցույց տալ գործարանների և շինօբյեկտների դիրեկցիաներին՝ բարելավելու համար բանմատակարարումը և բանվորների կենցաղային պայմանները:

դ) Ոգնել գործարանների և շինօբյեկտների դիրեկցիաներին վերանայելու աշխատանքի և գնահատման նորմաները՝ աշխատավարձի «ձախ» հավասարեցումն արմատախիլ անելու, աշխատավարձի ֆոնդերի գերածախսը վերացնելու և միութենական գնացուցակները ճշտությամբ կիրառելու համար, վերացնելով բանուժի հոսունությունը:

9. Ծանր արդ. ժողկոմատում շտապ կարգով լուծել մեխանիկական գործարանի դիրեկտորի և կարբիդի ու մարմարի



1008
34330

գործարանների փոխադրական միջոցների հարցը՝ ապահովելով մեքգործարանում ուժեղ միանձնյա ղեկավարություն և կարբիդի ու մարմարի գործարանները հում նյութով:

10. Թեթև արդ. ժողկոմատում հատկապես քննության առնել կարի նոր գործարանի կառուցման ընթացքը և կտրուկ միջոցներ ձեռք առնել նրա գործարկումն արագացնելու համար:

11. Մատժողկոմատում քննության առնել ծխախոտի նոր գործարանի կառուցման ընթացքը և վճռական միջոցառումներով արագացնել նրա գործարկումը:

12. Բոլոր գերատեսչություններում առանձնացնել պարգևատրման հատուկ ֆոնդ գործարաններին, շինօբյեկտներին, առանձին բանվորներին և ինժեներա-տեխնիկական պերսոնալին «ճեղքվածքների վերացման յոթամսյակի» ընթացքում նրանց որինակելի աշխատանքի համար պարգևատրելու նպատակով:

13. Բոլոր գերատեսչություններում հատկապես քննության առնել իրենց յենթակա գործարանների արտադրանքի վորակի և պլանների վորակական ցուցանիշների կատարումը և գործնական միջոցառումներով արմատական բեկում առաջ բերել այդ գծով:

## 4. ՀԼԿՅԵՄ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ԳԾՈՎ

1. Կազմակերպել կոմյերիտական բրիգադներ գործարաններում և շինօբյեկտներում ընկ. Ստալինի 6 ցուցումների լրիվ կենսագործմանն ոժանդակելու նպատակով:

2. Ապահովել ԼԿՅԵՄ աշխատանքի վերակառուցումը ձեռնարկություններում, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ԼԿՅԵՄ կազմակերպիչների և ԼԿՅԵՄ խմբակների աշխատանքի վորակի ու բովանդակության բարձրացման վրա:

3. Յերևանի արտադրական ձեռնարկություններում և շինօբյեկտներում անցկացնել յերիտասարդ հարվածայիննե-

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

րի հավաքներ «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» խնդիրների շուրջը:

4. Գործալքումները վերացնելու նպատակով կոմյերիտական բջիջների միջոցով ձեռնարկել դրանց պատճառների ուսումնասիրությունը և հրավիրել գործալքողների խորհրդակցություններ (գործարանի ու քաղաքային մաշտաբով):

5. Ոժանդակել տեխպրոպագանդայի ծավալման և այդ գծով տարվող աշխատանքի արմատական վերակառուցման գործին: Բոլոր գործարաններում ու շինարարական օբյեկտներում կուսպրոֆկազմակերպությունների հետ միասին կազմակերպել «տեխ–մասի» բջիջներ և պարտավորեցնել բոլոր կոմյերիտականներին մասնակցելու տեխնիկայի տիրապետման բջիջների աշխատանքին:

6. Արդֆինպլանների վորակական ցուցանիշների կատարման նպատակով բոլոր գործարաններում և ցեխերում կազմակերպել կոմյերիտական «վորակի բրիգադներ» և նրանց միջոցով ակտիվ մասսայական պայքար ծավալել խոտանի, պարապուրդների և կորուստների դեմ:

7. Ոժանդակել կոլխոզ առևտրի և լայն գործածության ապրանքների արտադրության ծավալման աշխատանքին գործարաններում: Գործարանների ուտիլ–ցեխերի և կոլխոզ կրպակների նկատմամբ կազմակերպել կոմյերիտական հսկողություն և ոժանդակություն, առանձին կոմյերիտականներին պատասխանատու դարձնելով այդ աշխատանքի համար:

8. Ուժեղացնել պիոներական կազմակերպության աշխատանքը գործարաններում և շինարարական օբյեկտներում: Պիոներների միջոցով կազմակերպել սոցմրցման պայմանագրերի ստուգում, ռացիոնալիզատորական առաջարկությունների հավաք, ծնողների հետ պայմանագրերի կնքում, կարմիր վզկապների յելույթներ, սև և կարմիր դրոշների հանձնում և այլն:

9. Յերքաղկոմի անդամներին կցել գործարանների և շինօբյեկտների ԼԿՅԵՄ բջիջներին, նրանց աշխատանքի վերա-



կառուցման և արդֆինպլանների «ճեղքվածքների վերացման յեռամսյակին» նրանց ակտիվ մասնակցությունն ապահովելու համար:

## 5. ՅԵՐՄՆՈՒՆԴՏՐԵՍՏԻ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԳԾՈՎ

1. Լավացնել բոլոր գործարանների և շինօբյեկտների ճաշարանների ճաշերի վորակը և քանակը: Գործարանների յեռանկյունիների հետ միասին վերանայել ճաշերի գները— քննելով ճաշերի կալկուլյացիան— գներն իջեցնելու իմաստով:

2. Հայկոոպի, Հայսոռի, փակ բանկոոպի, քաղսպառկոոպի և մասնագետների փակ կոոպերատիվի վարչություններում հատուկ քննության առնել «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» խնդիրները և լրացուցիչ աղբյուրների հաշվին բարելավել բանվորների մատակարարումը:

## 6. ՄԱՄՈՒԼԻ ԳԾՈՎ

1. «Խորհրդային Հայաստանում» և գործարանային բազմատիրաժ թերթերում լայն լուսաբանել «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» խնդիրներն ու ընթացքը:

2. «Խորհրդային Հայաստանի» միջոցով հրավիրել Յերևանի գործարանների և շինօբյեկտների պատի լրագրերի խմբկոլների ու բանթղթակիցների հավաք «ճեղքվածքների վերացման յեռամսյակի» խնդիրները և պատի թերթերի ու բանթղթակիցների անելիքները քննության առնելու համար:

---

# ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ

*(Ձեթ-օճառի, ծխախոտի և կոնսերվի գործարանների աշխատանքների վերակառուցման փորձից)*

## ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Գործարանը 1932 թվի պլանով պետք է արտադրի 13·365 հազար պայմանական տուփ կոնսերվ: Չնայած այս տարի համեմատական չափով ավելացել է արտադրանքը, այնուամենայնիվ գործարանը իր պլանները կատարում ու գերակատարում է: Անցյալ տարի նա թերակատարեց իր պլանը 20,2 տոկոսով. պատճառը առաջնորդի 6 ցուցումների թույլ իրագործումն էր: 1932 թվի առաջին կիսամյակի մանուժի պլանները կատարվել են 107,2%, հուլիսի պլանը՝ 125,6 տոկոսով: Գործարանը 13·336·000 պայմանական տուփի պլանի փոխարեն ընդունել է 13·665·000 տուփի հանդիպական պլան: Այժմ աշխատում են հանդիպական պլանով:

Պլանները վերակազմված են 10 ամսվա հաշվով: Մրգի ցեխում կիրառվում է հերթային հանդիպական պլանավորում. յուրաքանչյուր օր նախքան աշխատանքն սկսելը կազմակերպվում է 10-րոպեյական բրիգադային հերթափոխային ժողով, որտեղ քննվում է անցած օրվա պլանի կատարողականը և ընդունվում այդ օրվա հանդիպական պլանը:

Գործարանի բանվորների 83%-ն ընդգրկված են բրիգադային և անհատական սոցմրցման մեջ: Բոլոր ցեխերն իրար հետ կապել են ցեխային սոցմրցման պայմանագրեր, իսկ գործարանն ամբողջապես՝ Գորիի (Վրաստան) կոնսերվի գործարանի հետ:

Ցեխերը հունիս ամսից (այսինքն այն օրվանից, որ գործարանն սկսել է աշխատել), իսկ բրիգադներն օգոստոսի



սկզբից անցել են ինքնահաշվարկի: Դեկադային և օրվա պլանները հասցվում են մինչև ցեխը, բրիգադը, անհատ բանվորը: Յուրաքանչյուր օրվա պլանի կատարողականը փակցվում է պատերին:

Գործարանի կուսխմբակներն ունեն իրար հետ սոցմրցման պայմանագրեր, կուսակցական աշխատանքների բովանդակության բարձրացման և պլանները կատարելու և գերակատարելու ուղղությամբ: Բջիջը մրցման մեջ է մտել ձեթ-օճառի գործարանի կոմբջիջի հետ թեկնածուների մեջ լավ աշխատանք կազմակերպելու համար: Կուսխմբակները 15 օրը մեկ անգամ խմբակի դռնբաց ժողովում լսում են բրիգադիրների զեկուցումները պլանների կատարողականի վերաբերյալ: Յուրաքանչյուր ամսի վերջը ցեխբջիջի դռնբաց ժողովում քննվում է ցեխի ամսական պլանների կատարողականը և հաջորդ ամսվա պլանը: Արտխորհրդակցություններն աշխատում են առանց ընդմիջումի՝ քննության յենթարկելով արտադրական կյանքի հետ կապված խնդիրները: Ունեն 13 բրիգադային պատի թերթ, որ լույս է ընծայվում ամեն 15 օրը մեկ անգամ. ինչպես և 4 ցեխային և մեկ համագործարանային պատի թերթ: Կուս. և պրոֆկազմակերպությունները ցեխերում ունեն յեռանկյունիներ: Հուլիս ամսում 3 հոգի ընդունված են կուսշարքերում և 13 հոգի փոխադրված են անդամ: Կուսխմբակների կազմակերպիչները և ագիտատորները բանվորների համար ընդմիջումների ժամանակ և աշխատանքից հետո կազմակերպում են բարձրաձայն ընթերցանություն: Միանձնյա ղեկավարությունը պահպանվում է անխախտ:

## ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պլանները վերակազմված են 10 ամսվա հաշվով: Ունեն հանդիպական պլան. կիսամյակի պլանը կատարված է 106,6 տոկոսով: Պլանները հասցված են ցեխը, բրիգադը և անհատ բանվորներին: Կատարողականը ամեն օր փակցվում է պատերին: 5 ցեխ և 3 բրիգադ անցել են ինքնահաշվարկի:

Բոլոր բանվորներն աշխատում են գործարքով: Գործարանն ունի փոխանցիկ դրոշ, վորը այժմ գտնվում է տեսակավորող ցեխի ձեռքին: Կազմակերպված է վորակի ցուցահանդես, վորտեղ սև և կարմիր տախտակների վրա իրենց արտադրանքի նմուշներով ցուցադրվում են բանվորների անուն-ազգանունները:

Գործարանի բանվորների 75 տոկոսը ունեն անհատական սոցմրցման պայմանագրեր: Պրոգուլշչիկների և լոդըրների համար կազմակերպված է ընկերական դատարան, ևն, կարմիր և առանձին ցեխերի համար տեմպերի տախտակ: Կուսակցական ուժերը նպատակահարմար են դասավորված: Կուսխմբակները ամիսը ունենում են 3 նիստ, քննում են բրիգադիրների, ինչպես և խմբակի անդամների զեկուցումները և տալիս կոնկրետ ցուցումներ: Բջիջը յուրաքանչյուր ամսի վերջին լսում է պլանի կատարողականը, արդյունքները և մասսայականացնում բոլոր խմբակներում: Յուրաքանչյուր հանգստյան օր խմբակի կուսկազմակերպիչների հետ տարվում է հատուկ պարապմունք:

## ՁԵԹ-ՕՃԱՌԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Արդֆինպլանները վերակազմված են 10 ամսվա հաշվով: Պլանները հասցված են ցեխը, բրիգադը և անհատ բանվորներին: Կատարողականը փակցվում է պատերին: Ունեն հերթափոխային հանդիպական պլան: Բոլոր աշխատանքները կատարվում են բրիգադային ձևով, բրիգադը նախքան աշխատանքն սկսելը կազմակերպում է 10-րոպեական բրիգադային խորհրդակցություն, քննում է օրվա պլանը, նախորդ բրիգադի պլանների կատարողականը և ընդունում է հանդիպական պլան: Կազմակերպված է 6 տնտհաշվարկի բրիգադ: Ձեթի գործարանի հարվածային բանվոր Գարուշ Իսահակյանի տնտհաշվարկի բրիգադը 2-րդ կվարտալում տնտեսել է 2.700 ռուբլի: Գործարանի ամբողջ ցեխերը և բրիգադները իրար հետ կնքել են սոցմրցման պայմանագրեր: Գործարանը ունի սոցմրցման պայմանագիր Գանձակի ձեթի



գործարանի հետ: Բանվորների 85 տոկոսը ունեն անհատական սոցմրցման պայմանագրեր: Գործարանը ամբողջապես ապահովված է հում և օժանդակ նյութերով: Կուլտաշխատանքները բավարար չափով վերակառուցված են: Կուսխմբակներն ունեն ագիտատորներ, պատի թերթեր: Բոլոր ցեխերում և բրիգադներում կազմակերպված է յեռանկյունի: Բջիջը սոցմրցման պայմանագիր է կնքել կոնսերվի գործարանի կուսբջիջի հետ թեկնածուների մեջ տարվելիք աշխատանքների կանոնավորման ուղղությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներում կուսակցության մեջ ընդունվել են 6 հոգի, անդամ են փոխադրվել 7-ը: Խմբակները կազմակերպում են բարձրաձայն ընթերցանություն ագիտատորների միջոցով: Յուրաքանչյուր կուսակցականի տրված է առանձին պարտականություն. խմբակներում լսում են նրանց զեկուցումները իրենց տարած աշխատանքների մասին և տալիս են կոնկրետ ցուցումներ: Խմբակը յուրաքանչյուր դեկադայում քննում է բրիգադի պլանների կատարողականը, իսկ բջիջն ամսի վերջում քննում է գործարանի ամսվա պլանի կատարողականը, ինչպես և հաջորդ ամսվա պլանները: Միանձնյա ղեկավարությունը չի խախտվում: Գործարանը 6 ամսվա պլանները կատարել է 100,5 տոկոսով:

Выполним пятилетку в четыре года.
Издательство ЦК КП (б) А. Партиздат
Эривань 1932 г.

Հայպոլիգրաֆի տպարան
Գր. 7650 (բ)
Հրատարակ. № 16
Պատվեր № 2720
Տիրաժ 1500

Սրբագրեց Լ. Սիոմյան
Հանձնված է արտադրության 19 օգոստոսի 1932 թ.
Ստորագրված է տպելու 22 օգոստոսի 1932 թ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0210500

32.010